— Այդ ուղիղ է: Բայց ես ի՞նչ իրաւունքով կարող եմ քեզ քարշ տալ այն փորձանքների մէջ, որոնց ես ինքս պատրաստել եմ ինձ համար...

— Ինձ համար միեւնոյն է, թէ ով է պատրաստել:

— Բայց դու գիտե՞ս, որ ես այս աշխարհում կորցնելու ոչինչ չունեմ. իսկ քեզ կարօտ են մայրդ, քոյրերդ եւ, վերջապէս, Սոնան: Դու չէ՞ս մտածում ազատել նրան, չէ՞ որ նա գերի է իր հօր, այն վայրենի հօր ձեռքում:

— Ես մտածում եմ... ես մինչեւ անգամ խոստացել եմ ազատել նրան...: Բայց ես նրան կ'ազատեմ, քեզանից չբաժանելով:

— Լաւ, — ասաց նա խռովեալ ձայնով: — Այսոամենայնիւ, դու պէտք է ընդունես այս քսակը. ուղարկիր մօրդ, թող նա քաղցած չմնայ. գուցէ դու երկար բաժանուած կը մնաս նրանից...

Ես հրաժարուեցայ, խնդրելով, որ նա ինքը կարգադրէ որպէս ցանկանում է:

Կարօն համաձայնեցաւ: Բայց ես նկատեցի, թէ որպէ՛ս վառւում էին նրա լի վրդովմունքով աչքերը եւ ինչպէ՛ս անհանգիստ կերպով բաբախում էր նրա կուրծքը: Երեւում էր, խիստ ծա՛նր էր նրա այն համաձայնութիւնը, որ տուեց ինձ իր մօտ պահելու համար...

— Դու պիտի ընդունես մի քանի պայմաններ, Ֆարհատ:

— Ամէն բանի յօժար եմ ես:

— Լսի՛ր. — քո աչքերը իբր թէ ոչինչ չեն տեսնում, թէեւ շատ բաներ պիտի տեսնես:

— Ես ինձ կոյր կը ձեւացնեմ:

— Քո ականջները իբր թէ ոչինչ չեն լսում, թէեւ շատ բաներ պիտի լսես:

— Ես ինձ խուլ կը ձեւացնեմ:

— Քո լեզուն ոչինչ չպիտի խոսէ, թէեւ շատ բաներ պիտի գիտենաս:

— Ես ինձ մունջ կը ձեւացնեմ:

— Դու սեփական կամքի տէր չպիտի լինես:

— Ես ամէն բանում կը հնազանդուեմ քո կամքին:

— Եւ իմ ընկերների կամքին:

Եւ քո ընկերների կամքին:

— Բաւական է, տուր ինձ ձեռքդ:

Ես ձեռք տուեցի, նա սեղմեց ինձ իր կուրծքի վրայ եւ համբուրեց: Այդ եղբայրական համբոյրը կնքեց մեր ուխտը...